

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

« \_\_\_\_\_ 2019 թ.

N \_\_\_\_ - Ն

**ՈՐՈՇՈՒՄ**

**ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ, ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Սահմանադրության 182-րդ հոդվածի 1-ին մասով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 37-րդ կետով, 69-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Սահմանել.

1) Երևան համայնքի կամավոր խնդիրները՝ համաձայն N 1 հավելվածի.

2) սոցիալական աջակցության չափորոշիչները՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Հաստատել կամավոր խնդիրների լուծման նպատակով Երևանի քաղաքապետի սեփական լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը՝ համաձայն N 3 հավելվածի:

3. Սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված կամավոր խնդիրները՝ Երևանի տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորություններն են և դրանց լուծումն ապահովում է Երևանի քաղաքապետը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ սույն որոշման N1 հավելվածի 1-ին կետի 14-րդ ենթակետի, որի գործողությունը տարածվում է 2018 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

2019թ. \_\_\_\_\_ « »

Երևան

## ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### «ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻԶՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սահմանադրության (06.12.2015թ. խմբագրությամբ) 182-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները լինում են սեփական՝ համայնքի պարտադիր և կամավոր խնդիրների լուծման նպատակով, ինչպես նաև պետության կողմից պատվիրակված: Համայնքի պարտադիր խնդիրները սահմանվում են օրենքով, իսկ կամավոր խնդիրները՝ համայնքի ավագանու որոշումներով:

Սահմանադրական նշված նորմի հիման վրա համապատասխան փոփոխություններ են կատարվել «Տեղական ինքնակառավարման մասին» (16.12.2016թ. ՀՕ-237-Ն օրենքով) և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» (04.10.2017թ. ՀՕ-137-Ն օրենքով) օրենքներում:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի (16.12.2016թ. ՀՕ-237-Ն օրենքի խմբագրությամբ) 10-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանվում են ավագանու որոշմամբ:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ համայնքի ավագանին օրենքով սահմանված կարգով սահմանում է համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 69-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքապետը, օրենքով սահմանված սեփական և պետության պատվիրակված լիազորություններից բացի, օժտված է նաև ավագանու սահմանած կամավոր խնդիրների լուծմանն ուղղված լիազորություններով: Համայնքի կամավոր խնդիրները սահմանում է համայնքի ավագանին:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 37-րդ կետի համաձայն՝ ավագանին քաղաքապետի ներկայացմամբ որոշում է կամավոր խնդիրների լուծման նպատակով սահմանված սեփական լիազորությունների իրականացման կարգը և անհրաժեշտ ֆինանսական միջոցները:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի (16.12.2016թ. ՀՕ-237-Ն օրենքի խմբագրությամբ) 10-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծվում են համայնքի ավագանու սահմանած չափորոշիչներով:

Նախագծում կամավոր խնդիրների ներառման համար կողմնորոշիչ են եղել մինչև 04.10.2017թ. ՀՕ-137-Ն օրենքի ընդունումը գործող «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի խմբագրության դրույթները, Երևանի զարգացման ծրագրերը, պրակտիկայում բացահայտված և ձևավորված խնդիրների լուծման անհրաժեշտությունը, իսկ սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման չափորոշիչների մշակման համար հիմք են հանդիսացել նաև «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 18-րդ հոդվածի, 37-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթները:

Նախագիծը մշակելիս հիմք է ընդունվել «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի կարգավորումը, ինչպես նաև հաշվի են առնվել նաև ՀՀ կառավարության 10.09.2015թ. N1044-Ն և N1061-Ն որոշումների դրույթները:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով վերը նշված օրենքների դրույթները՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

## ՏԵՂԵԿԱՆՔ

**«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՍ ԲԱՑԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Երևան համայնքի կամավոր խնդիրները և սոցիալական աջակցության չափորոշիչները սահմանելու, կամավոր խնդիրների լուծման նպատակով Երևանի քաղաքապետի սեփական լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

## ՏԵՂԵԿԱՆՔ

**«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

«Երևան համայնքի կամավոր խնդիրները և սոցիալական աջակցության չափորոշիչները սահմանելու, կամավոր խնդիրների լուծման նպատակով Երևանի քաղաքապետի սեփական լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ



**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ**

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ  
 ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ, ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ  
 ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ  
 ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ  
 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ  
 ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

	Առաջարկության, առարկության հեղինակը	Առաջարկության, առարկության բովանդակությունը	Եզրակացություն
1.	Երևանի ավագանու իրավական հարցերի մշտական հանձնաժողով	Առաջարկություն, առարկություն չի ներկայացվել	Տրվել է դրական եզրակացություն
2.	Երևանի ավագանու Իմ քայլը խմբակցության անդամ Հայկ Հովհաննիսյան (18.06.2019թ. հ. 01/273 գրություն)	<p>Նախագծի Հավելված N 1 կատարել լրացումներ և փոփոխություններ՝ հետևյալ բովանդակությամբ.</p> <p>1. 2-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ վթարային բազմաբնակարան շենքերի և <u>առանձնատների</u> բնակիչների վերաբնակեցման աջակցում:</p> <p>2. 3-րդ կետում &lt;կազմակերպումը&gt; բառից հետո լրացնել &lt;և իրականացումը&gt; բառերը:</p> <p>3. 17-րդ կետում &lt;ուսման վարձի լրիվ կամ մասնակի հատկացումը&gt; բառերը փոխարինել &lt;աջակցություն&gt; բառով:</p> <p>4. 28-րդ և 33-րդ կետերը միավորել մեկ ընդհանուր կետում՝ ելնելով բովանդակային նմանությունից:</p>	<p>Ընդունվել է: Նախագծի N 1 հավելվածի 1-ին կետի 2-րդ ենթակետը վերախմբագրվել է ըստ առաջարկության:</p> <p>Ընդունվել է: Կատարվել է համապատասխան լրացում:</p> <p>Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>Ընդունվել է: Նախագծի N 1 հավելվածի 28-րդ և 33-րդ կետերը միավորել են մեկ՝ 28-րդ կետում:</p>

## ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

**«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ**

Հ/Հ	Առաջարկության, առարկության հեղինակը	Առաջարկության, առարկության բովանդակությունը	Եզրակացություն
1.	<p>Երևան քաղաքի ավագանու «Իմ քայլը» խմբակցության անդամներ Միփան Ասատրյան, Գրիգոր Երիցյան, Հակոբ Մելիքյան, Սաթենիկ Մկրտչյան, Գայանե Վարդանյան</p>	<p><b>Հավելված 1</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Հիմնավորված չէ ներկայացված կամավոր խնդիրների ընտրությունը. առաջարկում ենք հղում անել դիմումների, թեժ գծերի վիճակագրության, ծրագրերի և դրանց իրականացման վերլուծությունների և այլ համապատասխան փաստաթղթերի:</li> <li>• Կամավոր խնդիրների մեջ ավելացնել սոցիալական բնակարանաշինության իրականացումը:</li> <li>• Հստակեցնել 8 և 21 կետերում նշված կազմակերպությունների կազմակերպաիրավական ձևը:</li> <li>• 8-րդ կետը լրամշակել հետևյալ կերպ. «Երևանի վարչական տարածքում գործող մշակութային կազմակերպություններին և անհատներին աջակցումը»:</li> </ul>	<p>Ընդունվել է ի գիտություն:</p> <p>Նախագծի տեղեկանք-հիմնավորմամբ նշված են այն օրենքների դրույթները, որոնք հիմք են հանդիսացել կամավոր խնդիրների սահմանման համար, ինչպես նաև նշվել է պրակտիկայում բացահայտված և ձևավորված խնդիրների լուծման անհրաժեշտությունը: Աշխատակազմի իրավաբանական վարչության կողմից նախաձեռնած նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների քննարկման ժամանակ ավագանու անդամներին է ներկայացվել նաև Երևանի քաղաքապետարան մուտք եղած դիմումներով, գրություններով բարձրացված հարցերի վիճակագրական տվյալները:</p> <p>Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:</p> <p>Չի ընդունվել: Քննարկման արդյունքում ձեռք է բերվել համաձայնություն կազմակերպաիրավական ձևը չնշելու վերաբերյալ:</p> <p>Ընդունվել է: Կետը լրամշակվել է (հավելվածի 1-ին կետի 9-րդ ենթակետ):</p>

		<ul style="list-style-type: none"> <li>• 9-րդ կետը հանել:</li> <li>• 16-րդ կետը վերաձևակերպել հետևյալ կերպ. «Սոցիալական ծրագրերի իրականացմանը»:</li> <li>• 19-րդ կետը վերաշարադրել հետևյալ կերպ. «Սոցիալական պաշտպանության, բնապահպանական, կրթական, երիտասարդական և համայնքի կամավոր ու պարտադիր խնդիրների իրականացմանն աջակցող հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությունը»:</li> <li>• 22 կետը վերախմբագրել հետևյալ կերպ. «Բնակչության սանիտարահիգիենիկ, բնապահպանական, քաղաքացիական պաշտպանության, աղետների արձագանքման կրթության, առողջ ապրելակերպի քարոզչությունը»:</li> <li>• Կամավոր խնդիրների մեջ ավելացնել համայնքի ներառական զարգացման խթանումը:</li> <li>• Կամավոր խնդիրների մեջ ավելացնել Երևանում բնակվող երիտասարդների զբաղվածության խթանումը:</li> <li>• Կամավոր խնդիրների մեջ ավելացնել Երևանում համայնքային երիտասարդական կենտրոնների հիմնադրման խթանումը՝ տեղական երիտասարդական կազմակերպությունների հետ համագործակցությամբ:</li> </ul> <p><b>Հավելված 2</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Հանել 9-րդ կետը:</li> </ul>	<p>Ընդունվել է: Նշված ենթակետը հանվել է:</p> <p>Ընդունվել է մասնակի: Նշված կետը վերախմբագրվել է (հավելվածի 1-ին կետի 18-րդ ենթակետ):</p> <p>Ընդունվել է մասնակի (սոցիալական պաշտպանության մասը կարգավորված է ՀՀ կառավարության 10.09.2015թ. N 1044-Ն որոշմամբ): Կետը վերախմբագրվել է (հավելվածի 1-ին կետի 25-րդ ենթակետ):</p> <p>Ընդունվել է: Կետը վերախմբագրվել է (հավելվածի 1-ին կետի 28-րդ ենթակետ):</p> <p>Չի ընդունվել է: Հստակեցված չէ, թե խոսքը համայնքի ներառական զարգացման որ ոլորտին է վերաբերում՝ «Ներառական համայնք», «Ներառական կրթություն. կրթություն բոլորի համար»:</p> <p>Ընդունվել է: Կատարվել է համապատասխան լրացում (հավելվածի 1-ին կետի 20-րդ ենթակետ):</p> <p>Ընդունվել է: Կատարվել է համապատասխան լրացում: (հավելվածի 1-ին կետի 21-րդ ենթակետ):</p> <p>Ընդունվել է: Հավելվածի 1-ին կետի 9-րդ ենթակետը հանվել է:</p>
--	--	--	--



		<ul style="list-style-type: none"> <li>Կետ 2-ում ավելացնել, թե ինչ հիմքով է որոշվելու սոցիալական աջակցության տրամադրումը սույն հավելվածով չնախատեսված դեպքերում:</li> </ul> <p><b>Հավելված 3</b></p> <ul style="list-style-type: none"> <li>Ինչով է պայմանավորված կամավոր խնդիրների իրականացման համար նախատեսված բյուջեի 5 տոկոսը. խնդրում ենք ներկայացնել վերջին երկու տարվա բյուջեի և ծախսերի վիճակագրություն:</li> <li>Խնդրում ենք պարզաբանել կետ 4-րդը:</li> <li>6-րդ կետի նախադասության վերջին «փաստաթղթերը» բառից հանել որոշիչ հոդը, քանի որ փաստաթղթերի ցանկը հստակ չէ:</li> <li>Ավելացնել հետևյալ կետը «Անկախ նախաձեռնողից՝ կամավոր խնդիրների լուծման նպատակով սեփական լիազորությունների իրականացման բոլոր առաջարկությունների դեպքում որոշումը պետք է հիմնված լինի աշխատակազմի ոլորտային ստորաբաժանման եզրակացության վրա»:</li> </ul>	<p>Չի ընդունվել: Հավելված 3-ում նշված է, թե ովքեր են հանդիսանում սեփական լիազորության իրականացման նախաձեռնողները և ինչ հիմքով է տրամադրվելու սոցիալական աջակցությունը (աշխատակազմի ոլորտային ստորաբաժանումների եզրակացություններ, փաստաթղթեր):</p> <p>Տես՝ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասը:</p> <p>Պարզաբանվել է:</p> <p>Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>Ընդունվել է: Կատարվել է համապատասխան լրացում (հավելվածի 9-րդ կետ):</p>
2.	<p>Երևան քաղաքի ավագանու «Իմ քայլը» խմբակցության անդամ Էռնեստ Ավանեսով</p>	<ol style="list-style-type: none"> <li>Ադրբեջանից բռնագաղթված հայ փախստականների բնակարանային պայմանների բարելավման գործընթացի կազմակերպումը.</li> <li>Երևան համայնքի համագործակցությունը (ռոտացիոն սկզբունքով) Հայաստանի և Արցախի սահմանամերձ բնակավայրերի (գյուղերի և/կամ քաղաքների) հետ.</li> </ol> <p>Ինչես նաև կարևորում եմ Երևան համայնքի կամավոր խնդիրների ցանկի 11-րդ կետը վերաշարադրել հետևյալ կերպ՝</p>	<p>Ընդունելի չէ (տես՝ Երևան քաղաքի ավագանու 25.12.2018թ. N 41-Ն որոշման հավելվածի 4-րդ կետի 6-րդ ենթակետը):</p> <p>Ընդունվել է: Կատարվել է համապատասխան լրացում:</p> <p>Չի ընդունվել: Նախադարձական կրթական հաստությունների մասով Երևան համայնքն</p>

		<p>«նախադպրոցական և հանրակրթական կրթական հաստատությունների գործունեության աջակցումն ու դրանց շենքերի, շինությունների ամբողջության պահպանումը»:</p>	<p>ունի պարտադիր լիազորություններ, այդ թվում՝ շենքերի և շինությունների պահպանման մասով, իսկ հիմնական դպրոցների մասով՝ Երևանի քաղաքապետն ունի պատվիրակած լիազորություններ:</p>
3.	<p>Երևան քաղաքի ավագանու «Իմ քայլը» խմբակցության անդամ Գրիգոր Երիցյան</p>	<p>ՀԱՎԵԼՎԱԾ 1</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Երևան համայնքի կամավոր խնդիրների ցանկից հանել 17-րդ կետը՝ բնակչության, հատկապես երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակությանն աջակցումը:</li> <li>2. 17-րդ կետը վերաշարադրել հետևյալ բովանդակությամբ՝ Երևանում բնակվող երիտասարդների զբաղվածության խթանումը:</li> <li>3. Կամավոր խնդիրների մեջ ավելացնել Երևանում համայնքային երիտասարդական կենտրոնների հիմնադրման խթանումը:</li> <li>4. Կամավոր խնդիրների մեջ ավելացնել Երևանում գործող տեղական երիտասարդական կազմակերպություններին աջակցումը:</li> <li>5. 8-րդ կետում ավելացնել մշակութային կազմակերպություններին, մշակութային անհատ գործիչներին և երիտասարդ արվեստագետներին աջակցումը:</li> <li>6. Յանկից հանել 9-րդ կետը:</li> <li>7. 12-րդ կետում ֆիզիկական կուլտուրան փոխարինել առողջ ապրելակերպով:</li> <li>8. 13-րդ կետում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքներին փոխարինել Երևանի բնակչության խոցելի խմբերին և անձանց</li> <li>9. 15-րդ կետում մասնակի հատկացումը փոխել մասնակի կամ լրիվ հատկացումը:</li> </ol>	<p>Չի ընդունվել: Հեղինակը չի հիմնավորել առաջարկությունը:</p> <p>2, 3, 5, 6-րդ կետերում նշված առաջարկություններն արդեն իսկ ներկայացվել էին խմբակցությամբ մի խումբ անդամների կողմից:</p> <p>Ընդունվել է: Կատարվել է լրացում (հավելվածի 1-ին կետի 22-րդ ենթակետ):</p> <p>Չի ընդունվել (տես՝ «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքը):</p> <p>Չի ընդունվել (տես՝ «Սոցիալական աջակցության մասին» օրենքը):</p> <p>Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն (հավելվածի 1-ին կետի 17-րդ կետ):</p>

		<p>10. Կամավոր խնդիրների մեջ ավելացնել Երևան համայնքի խնդիրների լուծմանը միտված երիտասարդական կազմակերպությունների, երիտասարդների և երիտասարդների ոչ ֆորմալ խմբերի ծրագրերի ֆինանսավորում:</p> <p>11. Կամավոր խնդիրների մեջ ավելացնել բնակչության շրջանում կամավորական աշխատանքի և կամավորական մշակույթի խթանումը:</p> <p>12. Կամավոր խնդիրների մեջ ավելացնել Երևանի ավագ դպրոցների աշակերտների շրջանում մասնագիտական կողմնորոշման ծրագրերի խթանումը:</p> <p>13. Կամավոր խնդիրների մեջ ավելացնել Երևանի ավագ դպրոցների կրթական ծրագրերում «տնտեսագիտական գրագիտությունը և ձեռներեցությունը» խթանող առարկաների ներառումը և զարգացումը:</p> <p>14. Կամավոր խնդիրների մեջ ավելացնել երիտասարդության շրջանում ոչ ֆորմալ կրթության ճանաչման ու տարածման խթանումը:</p> <p>15. Կամավոր խնդիրների մեջ ավելացնել Երևանի բնակչության, հատկապես պատանիների և երիտասարդների շրջանում քաղաքացիական կրթության, ներառման, ժողովրդավարության, գենդերային հավասարության և շրջակա միջավայրի հիմնախնդիրների մասին իրազեկվածության բարձրացումը:</p>	<p>Չի ընդունվել: Առաջարկությունը մասնակի կրկնվում է: Հասկանալի չէ, թե ինչ է նշանակում «երիտասարդների ոչ ֆորմալ խմբեր»:</p> <p>Ընդունվել է: Կատարվել է համապատասխան լրացում:</p> <p>Չի ընդունվել: Երևան համայնքի լիազորություններից դուրս է:</p> <p>Չի ընդունվել: Երևան համայնքի լիազորություններից դուրս է:</p> <p>Ընդունվել է մասնակի: Կատարվել է համախառնախան լրացում:</p> <p>Ընդունվել է: Կատարվել է համախառնախան լրացում:</p>
4.	<p>Երևան քաղաքի ավագանու «Բարգավաճ Հայաստան» խմբակցություն</p>	<p>1. 1-ին կետին ի լրումն 2019 թ-ի Երևան համայնքի կամավոր խնդիրների ծրագրի մեջ հրատապ կարգով ներառել Լեռ 35 տան խնդիրը: Ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի կողմից արձանագրված այս կարգի հրատապ լուծում պահանջող տների հարցը:</p> <p>2. Մենք որևէ կերպ չենք պատկերացնում թե ի՞նչ համագործակցություն է լինելու Երևան վարչական տարածքում գործող պետական գրանցում ունեցող կրոնական կազմակերպությունների հետ: Հետևաբար, ունենք առարկություն 9-րդ կետի մասով և առաջարկում</p>	<p>Քննարկումների արդյունքում առաջարկությունը հանվել է:</p> <p>Ընդունվել է: Նշված կետը հանվել է:</p>

		<p>ենք հանել այն Երևան համայնքի կարևոր խնդիրների ցանկից: Առարկությունը հիմնավորում ենք այն բանով, որ Հայաստանում կան մի շարք գրանցված կրոնական կազմակերպություններ, որոնք այսպես թե այնպես իրենց գործունեությունը և հոգեվորությունը «բարձր մակարդակով» իրականացնում են: Այսպիսով, քաղաքային իշխանության համագործակցությունը այս տիրույթում չենք պատկերացնում և դեմ ենք: Երևան քաղաքի համագործակցությունը տեսնում ենք բացառապես Հայ առաքելական եկեղեցու և Հայաստանում ապրող ազգային փոքրամասնությունների պատկանելություն հանդիսացող կրոնական կազմակերպությունների հետ:</p> <p>3. Առաջարկում ենք հստակություն մտցնել 10-րդ կետում նշված ավադական ազգային ծեսերի վերականգնմանն ու տարածմանը նպաստելու մեխանիզմների և գործընթացների մասով:</p> <p>4. 14-րդ կետի վերաբերյալ առաջարկում ենք ծնողների հետ տեսակցությունից զատ կատարել նաև մոնիթորինգ որոշակի տեղեկություն հավաքագրելու ուղղությամբ, զորամասերում կենցաղային խնդիրների առկայության պարզազայում՝ աջակցություն ցուցաբերելու նպատակով:</p> <p>5. 19-րդ կետը իրականացնելիս առաջարկում ենք հատկապես ուշադրություն դարձնել գետերի և հունների մաքրմանը, ինչն անչափ կարևոր է Երևանի էկոլոգիայի և սանիտարահիգիենիկ չափանիշների պահպանման համար: Հավելենք, որ ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցությունը հետևողական է այս հարցում, պարբերաբար բարձրաձայնում է և մանրամասն տիրապետում է այս ոլորտի խնդիրներին: Անհրաժեշտության դեպքում մեր կողմից կատարված ուսումնասիրությունները կարող ենք ներկայացնել:</p> <p>6. Խնդրում ենք ավելի հստակ ներկայացնել թե ի՞նչ ասել է</p>	<p>Քննարկումների ընթացքում խոսվել է մեխանիզմների մասին:</p> <p>Քննարկվել է: Առաջարկությունը հանվել է:</p> <p>Ընդունվել է ի գիտություն: Բարձրացված խնդիրն ուշադրության կենտրոնում է:</p> <p>Քննարկվել է: Պատկերացումները</p>
--	--	---	---

		<p>բնակչության սանիտարահիգիենիկ, առողջ ապրելակերպի քարոզչություն, և Երևանի քաղաքային իշխանությունները ինչպե՞ս են պատկերացնում այն և քարոզչության ինչպիսի գործիքակազմ է նախատեսվում կիրառել:</p> <p>7. Երևան համայնքի կամավոր խնդիրների ծրագրի ցանկում ավելացնել ևս մեկ դրույթ, որը իր մեջ ներառում է հետևյալը. ստեղծել և ձևավորել յուրաքանչյուր վարչական շրջանին կից կամավորական խմբեր, որոնք կարող են իրականացնել Երևան քաղաքի պատմամշակութային հուշարձանների լվացումը, մաքրումը, ինչպես նաև համայնքում ապրող ծերերի և խնամքի կարիք ունեցող մարդկանց պարբերական աջակցությունը և այլ աշխատանքներ:</p> <p><i>Նշենք նաև, որ հստակ չէ ֆինանսական հատվածի հատկացումների բաժինը: Խնդրում ենք ներակայացնել, թե ի՞նչ միջոցներով են կազմակերպվելու Երևան քաղաքի կամավոր խնդիրների իրականացումը:</i></p>	<p>ներկայացվել են:</p> <p>Ընդունվել է մասնակի: Կատարվել է համապատասխան լրացում: Սոցիալական ծառայություններ (ծերերի խնամք և այլն) տրամադրելու գործունեությունը հավաստագրման ենթակա է համաձայն «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի և 22-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի՝ ՀՀ կառավարության 10.09.2015թ. N 1078-Ն որոշման:</p> <p>Քննարկման ընթացքում ներկայացվել է Երևան համայնքի կամավոր խնդիրների իրականացման համար անհրաժեշտ միջոցների հատկացման մեխանիզմը:</p>
5.	Երևան քաղաքի ավագանու «Լոյս» խմբակցություն	Առաջարկություններ և դիտողություններ չկան	

## ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Երևան համայնքի կամավոր խնդիրներն են՝

1) բնակարանային, սոցիալական նշանակության օբյեկտների շինարարությունը և կապիտալ վերանորոգումը, այդ թվում՝ սոցիալական բնակարանաշինության իրականացումը.

2) վթարային բազմաբնակարան շենքերի և առանձնատների բնակիչների վերաբնակեցման աջակցումը.

3) թափառող կենդանիների (շների) վնասագերծման և ստերջացմանն ուղղված աշխատանքների կազմակերպումը և իրականացումը.

4) քաղաքացիական պաշտպանության մարմինների գործունեությանն աջակցելը.

5) բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններին աջակցելը.

6) արհեստների, ժողովրդական ստեղծագործության և գեղարվեստական ինքնագործունեության զարգացմանն աջակցելը.

7) պատմամշակութային հուշարձանների պահպանությանն աջակցելը.

8) պատմամշակութային, բնական, մարդկային, զբոսաշրջային-ռեկրեացիոն ռեսուրսների մասին տեղեկատվության հաշվառումը, դասակարգումը, տարածումը և հանրահռչակումը.

9) մշակութային կազմակերպություններին և անհատներին աջակցումը.

10) տոների և հիշատակի օրերի հետ կապված՝ զանգվածային միջոցառումների կազմակերպումը, ավանդական ազգային ծեսերի վերականգնմանն ու տարածմանը նպաստելը.

11) հանրակրթական դպրոցների աջակցումը.

12) ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման նպաստումը, սպորտային հրապարակների և մարզական այլ կառույցների շինարարության իրականացումը, հանգստի գոտիների ստեղծումը.

13) կյանքի դժվարին իրավիճակը կանխարգելելու կամ հաղթահարելու նպատակով անձին կամ ընտանիքին սոցիալական աջակցության և սոցիալական ծառայությունների (սոցիալական ծառայությունների տրամադրում՝ սոցիալական ծառայությունների կազմակերպում և (կամ) մատուցում, ինչպես նաև այդ ծառայությունների կազմակերպմանը և (կամ) մատուցմանն ուղղված ցանկացած գործունեություն) տրամադրումը.

14) Երևանի քաղաքապետարանի աշխատակիցների և ավագանու անդամների մահվան դեպքում՝ վերջիններիս ընտանիքներին մեկանգամյա դրամական օգնության տրամադրումը.

15) Երևանի քաղաքապետարանի աշխատակիցների և ավագանու անդամների ծանր հիվանդության դեպքում՝ վերջիններիս կամ նրանց ընտանիքներին մեկանգամյա դրամական օգնության տրամադրումը.

16) պարտադիր զինվորական ծառայության գորակոչված զինծառայողներին ծառայության վայրում տեսակցելու նպատակով վերջիններիս ընտանիքների անդամներին աջակցելը.

17) պետական բարձրագույն կամ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում, ինչպես նաև պետության կողմից հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող Երևանում հաշվառված սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողների աջակցությունը.

18) Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների կողմից, սոցիալական կարիքների գնահատման արդյունքում, տեղական սոցիալական ծրագրերի մշակումը և իրականացումը, ինչպես նաև այլ կազմակերպությունների կողմից իրականացվող սոցիալական ծրագրերին աջակցությունը.

19) բնակչության, հատկապես երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակությանն աջակցումը.

20) երիտասարդների զբաղվածության խթանմանը ուղղված ծրագրերի մշակումը և իրագրվումը.

21) համայնքային երիտասարդական կենտրոնների հիմնադրման խթանումը՝ տեղական երիտասարդական կազմակերպությունների հետ համագործակցությամբ.

22) Երևանում գործող տեղական երիտասարդական կազմակերպություններին աջակցումը.

23) ամբողջ կյանքի ընթացքում շարունակական կրթության ճանաչման ու տարածման խթանումը.

24) Երևան քաղաքի գլխավոր հատակագծով սահմանված հատվածներում բուֆերային անտառապաշտպան գոտիների ստեղծմանն աջակցելը.

25) բնապահպանական, կրթական, երիտասարդական և համայնքի կամավոր ու պարտադիր խնդիրների իրականացմանն աջակցող կազմակերպությունների հետ համագործակցությունը.

26) լիազոր մարմնի հետ համաձայնեցնելով՝ քաղաքային առողջապահական ծրագրերի իրականացումը.

27) առողջապահական, ֆիզիկական կուլտուրայի, մարզական կազմակերպություններին աջակցելը.

28) ժողովրդավարության, ներառման, քաղաքացիական կրթության, քաղաքացիական պաշտպանության, առողջ ապրելակերպի քարոզչության, շրջակա միջավայրի խնդիրների մասին հասարակության իրազեկվածության ապահովումը.

29) սանիտարական վիճակի բարելավման աջակցումը.

30) Երևան համայնքի համագործակցությունը Հայաստանի և Արցախի սահմանամերձ համայնքների հետ.

31) պատմամշակութային հուշարձանների լվացման, մաքրման, և այլ աշխատանքներ կատարելու նպատակով Երևանի յուրաքանչյուր վարչական շրջանի ղեկավարին կից կամավորական խմբերի ստեղծումը.

32) բնակչության շրջանում կամավորական աշխատանքի և կամավորական մշակույթի խթանումը.

33) բարեգործական ծրագրեր իրականացնող կազմակերպություններին և անձանց աջակցելը:

2. Սույն հավելվածում նշված աջակցությունների հասցեատերեր են հանդիսանում այն կազմակերպությունները, որոնց գտնվելու և գործունեության վայրն Երևանն է, ինչպես նաև Երևանում բնակվող և անձնագրային հաշվառում ունեցող անձինք (ընտանիքները)՝ բացառությամբ սույն որոշման N 2 հավելվածի 1-ին կետի 5-րդ ենթակետում նշված անձանց:



**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ**

1. Անձին կամ ընտանիքին սոցիալական աջակցության, ինչպես նաև տեղական սոցիալական ծրագրերի կազմակերպման և իրականացման վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման չափորոշիչներն են՝

1) կյանքի դժվարին իրավիճակում գտնվելը (հաշմանդամության, հիվանդության, վնասակար կախվածությունների, տարիքի հետ կապված ինքնասպասարկման ունակությունների կորստի, անօգնականության, առանց ծնողական խնամքի մնալու, աղքատության, գործազրկության, ընտանիքում կոնֆլիկտների, բռնության տարբեր տեսակների ենթարկված, շահագործման (թրաֆիքինգի) ենթարկվելու, միայնակության, սոցիալական մեկուսացման, դժբախտ պատահարի կամ արտակարգ իրավիճակներում հայտնվելու, մարդու կենսագործունեությանը խանգարող այլ օբյեկտիվ իրավիճակներ, որոնք անձն ինքնուրույն հաղթահարել չի կարող)։

2) Հայաստանի Հնարապետության պաշտպանության ժամանակ կամ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհվածի (մահացածի) անապահով ընտանիքների կարգավիճակում գտնվելը, եթե՝ անձը զոհվել (մահացել) է Հայաստանի Հնարապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու ժամանակ կամ Հայաստանի Հնարապետության պաշտպանության, ոստիկանության (ներքին գործերի), ազգային անվտանգության հանրապետական գործադիր մարմիններում, Հայաստանի փրկարար ծառայություններում, քրեակատորադական գործառույթներ իրականացնող պետական լիազոր մարմնում զինվորական ծառայության ընթացքում ծառայության ընթացքում ծառայողական պարտականությունները կատարելիս։

3) բազմազավակ ընտանիքի (4 և ավելի անչափահաս երեխաներ ունեցող), Հայրենական մեծ պատերազմի մասնակցի և նրան հավասարեցված անձի, փախստական ընտանիքի կարգավիճակում գտնվելը։

4) ազատազրկման վայրից վերադարձած՝ վերադարձից հետո առաջին վեց ամսվա ընթացքում սոցիալական ինտեգրացիայի շրջանում գտնվող անձ լինելը։

5) բնակության որոշակի վայր չունենալը և դրանով պայմանավորված սոցիալական բազմաբնույթ խնդիրների առկայությունը և կանխարգելումը։

2. Սոցիալական աջակցությունը կարող է տրամադրվել նաև սույն հավելվածի կետերում չնախատեսված այլ դեպքերում։

3. Սույն հավելվածի 1-ին կետի 5-րդ ենթակետում նշված դեպքում սոցիալական աջակցությունը տրամադրվում է այն անձանց, ովքեր նախկինում հաշվառված են եղել Երևանում և(կամ) նախկինում Երևանի վարչական տարածքում ունեցել են սեփականության իրավունքով իրենց պատկանող բնակարան (բնակելի տուն)։

4. Սույն հավելվածի 1-ին կետի 1-ից 4-րդ ենթակետերում նշված դեպքերում սոցիալական աջակցությունը տրամադրվում է Երևանի վարչական տարածքում փաստացի բնակվող և հաշվառված սոցիալական աջակցություն հայցող անձին կամ ընտանիքին:

5. Ընթացիկ տարվա ընթացքում սոցիալական աջակցությունը անձին կամ ընտանիքին հատկացվում է միայն մեկ անգամ՝ սոցիալական աջակցություն հայցող անձին կամ ընտանիքին ներկայացված փաստաթղթերի հիման վրա՝ սոցիալական (ֆինանսական) անապահովության գործոնի պարտադիր առկայությամբ, որը հավաստվում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական ապահովության վարչության եզրակացությամբ:

6. Տեղական սոցիալական ծրագրերի մշակման, կազմակերպման և իրականացման կարգը հաստատում է Երևան քաղաքի ավագանին:

## ԿԱՐԳ

### ԿԱՄԱՎՈՐ ԽՆՂԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են կամավոր խնդիրների լուծման նպատակով Երևանի քաղաքապետի սեփական լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգի հետ կապված հարաբերությունները:

2. Յուրաքանչյուր տարի կամավոր խնդիրների լուծման նպատակով Երևանի քաղաքապետի սեփական լիազորությունների իրականացման համար կարող է ծախսվել տվյալ տարվա համար հաստատված Երևանի բյուջեում «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 73-րդ հոդվածում ներկայացված մուտքերի աղբյուրներից (բացառությամբ 1-ին մասի 3-5-րդ, 14-րդ, 16-րդ, 19-24-րդ կետերում նշվածների) միջոցների ստացումների ընդհանուր ծրագրված ծավալի 3-5 տոկոսը:

3. Երևանի քաղաքապետը կամավոր խնդիրների լուծման նպատակով սեփական լիազորություններն իրականացնում է համայնքի բյուջեին, ինչպես նաև Երևանի զարգացման ծրագրերին համապատասխան:

4. Այն դեպքում, երբ Երևանի քաղաքապետի կողմից կամավոր խնդիրների լուծման նպատակով սեփական լիազորությունների իրականացման համար չի պահանջվում ֆինանսական միջոցների հատկացում՝ Երևանի քաղաքապետը դրանք իրականացնում է ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ:

5. Կամավոր խնդիրների լուծման նպատակով սեփական լիազորությունների իրականացման առաջարկություն կարող են նախաձեռնել՝ Երևանի քաղաքապետը, Երևան քաղաքի ավագանու անդամները, Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարները, սոցիալական դեպքի վարման շրջանակներում ձևավորված բազմամասնագիտական աշխատանքային խումբը, Երևանի բնակիչները և կազմակերպությունները:

6. Այն դեպքում, երբ կամավոր խնդրի լուծման նպատակով սեփական լիազորության իրականացումը նախաձեռնում են Երևան քաղաքի ավագանու անդամները, Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարները, սոցիալական դեպքի վարման շրջանակներում ձևավորված բազմամասնագիտական աշխատանքային խումբը, Երևանի բնակիչները և կազմակերպությունները, նախաձեռնողը Երևանի քաղաքապետին է ներկայացնում կամավոր խնդրի լուծման նպատակով սեփական լիազորության իրականացման վերաբերյալ դիմում՝ նշելով դրա նպատակը, խնդրի կարգավորման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և դրա լուծման անհրաժեշտությունը հիմնավորող փաստաթղթեր:

7. Երևանի քաղաքապետը դիմումը և սույն կարգի 6-րդ կետում նշված անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո՝

1) կամավոր խնդրի լուծման նպատակով սեփական լիազորության իրականացմանը համաձայնվելու դեպքում՝ մինչև 30-օրյա ժամկետում ճշտում է դրանց արժանահավատությունը և կամավոր խնդիրները լուծում է Երևան քաղաքի ավագանու կողմից հաստատված տվյալ տարվա բյուջեով նախատեսված այդ նպատակով հատկացված դրամական միջոցների հանրագումարի շրջանակում:

2) կամավոր խնդրի լուծման նպատակով սեփական լիազորության իրականացմանը չհամաձայնելու դեպքում՝ մինչև 30-օրյա ժամկետում նախաձեռնողին գրավոր տեղեկացնում է այդ մասին՝ նշելով չհամաձայնելու պատճառները:

8. Կամավոր խնդրի լուծման նպատակով սեփական լիազորության իրականացումն Երևանի քաղաքապետի կողմից նախաձեռնելու դեպքում սեփական լիազորության իրականացման նպատակի, խնդրի կարգավորման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափի և դրա լուծման անհրաժեշտությունը հիմնավորող փաստաթղթերի ներկայացումն ապահովում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ոլորտային ստորաբաժանումները:

9. Կամավոր խնդրի լուծման նպատակով սեփական լիազորության իրականացումը սույն հավելվածի 6-րդ կետում նշված անձանց և կազմակերպությունների կողմից նախաձեռնելու դեպքում կամավոր խնդիրների լուծման նպատակով սեփական լիազորության իրականացմանը համաձայնվելու կամ չհամաձայնվելու մասին որոշումն ընդունվում է հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ոլորտային ստորաբաժանման եզրակացությունը:

10. Կամավոր խնդրի լուծման նպատակով սեփական լիազորությունների իրականացմամբ պայմանավորված հետագա գործընթացների մշտադիտարկումը և վերահսկողությունն ապահովում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ոլորտային ստորաբաժանումները: